

ԽՈՍՐՈՎ ԹՈՐՈՍՅԱՆ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայագիտության մեջ իշխում է այն տեսակետը, որի համաձայն դատական իրավասությունը, արդարագատության իրականացումը եղել է հայ հոգևորականության սեփականությունը, աշխարհական մարմինները կամ չեն ունեցել դատական իշխանություն, կամ երկրորդական է եղել նրանց դերը այդ բնագավառում<sup>1</sup>: Ընդունելով մի անգամ, որ աշխարհիկ իշխանությունը դատական իրավասություն չի ունեցել կամ ունեցել է սահմանափակ չափով, նըշված ուսումնասիրողները, իրավական համարյա բոլոր վեճերը կամ դրանց մեծագույն մասը, բնականաբար, համարելու էին ընդդատյա հոգևոր ատյաններին:

Արդ, միջնադարյան Հայաստանում աշխարհիկ իշխանությունը, իրո՞ք, չի ունեցել դատական իրավասություն կամ երկրորդական է եղել նրա դերը այդ բնագավառում:

Դատական իրավասությունը գլխավորապես հոգևոր բարձր իշխանությունը վերագրելու համար Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը և այլք առաջին հերթին հիմնվել են Փավստոսի հեռեկալ վկայության վրա. «Բայց յայնժամ դեռ ևս կենդանի էր ծերունի սուրբն մեծն քորեպիսկոպոսն Գանիէլ, այր սքանչելի: Աշակերտ եղեալ էր սա մեծին Գրիգորի, վերակացու և գլխավոր եկեղեաց<sup>2</sup> նահանգին Տարօնոյ, Գրիգորի ձեռական իշխանութեանն կողման մասին գործակալութեանն մեծի դատաւորութեանն, ունէր զիշխանութիւնն դայն առանձինն»<sup>3</sup>: Այս վկայությունից Հ. Մանանդյանն<sup>4</sup>, օրինակ, եզրակացրել է, որ «Մեծի դատաւորութեան գործակալութիւնը» Գրիգորի սեփական իշխանությունն էր և, ուրեմն, դատական իշխանության բարձրագույն կրողը երկրում կաթողիկոսն էր: Ըստ բնագրի, սակայն, Գրիգորի սեփական իշխանությունը չի վերաբերում «գործակալութեան մեծի դատաւորութեանն»: Բնագրի քննվող հատվածը միայն մի բան է ասում. Գանիէլը վերակացու էր Տարօնի եկեղեցիների և այդ գավա-

1 Տե՛ս Վ. Բ ա ս տ ա մ յ ա ն ջ, Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, Յառաջարանութիւն. Ա. Գ ա ր ա գ ա շ յ ա ն, Քննական պատմութիւն Հայոց, մասն Բ, Թիֆլիս, 1895. Н. А до н и, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908. Խ. Ս ա մ ու լ յ ա ն, Մխիթար Գոշի Դատաստանագիրքն ու հին Հայոց քաղաքացիական իրավունքը, Վիեննա, 1911. «Կանոնագիրք Հայոց», հ. Ա, աշխատասիրություններ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, Առաջարան և այլն:

2 Պատմության բոլոր յոթ հրատարակություններում՝ եկեղեաց: Ք. Պատկանյանը իր հրատարակության մեջ (1883 թ.) ծանոթագրում է՝ «Յերեւա՝ եկեղեցեաց»: Նորայր Բյուզանդացին («Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք», Տիֆլիս, 1910, էջ 247) ուղղում է՝ եկեղեցեաց, որը և ընդունեցին Հ. Մանանդյանը, Ստ. Մալխասյանը և այլք:

3 «Փավստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832, էջ 36:

4 Տե՛ս «Ճեղգալիզմը հին Հայաստանում», Երևան, 1934, էջ 76:

ոի վրա տարածվող դատական իրավասությունը նրան էր տրված որպես առանձին իշխանություն:

Լուսավորչի տոհմը Հայաստանի մեծ ու ազդեցիկ տոհմերից էր և ընդարձակ տիրույթներ ուներ երկրի այլևայլ շրջաններում: Գրիգորյանները նախարարներ-ավատատերեր էին և իրենց տիրույթներում իրականացնում էին իշխանությունը, այդ թվում և դատական իրավասությունը հայտնի շափով, ճիշտ այնպես, ինչպես Արծրունիները, Մամիկոնյանները, Բագրատունիները և այլք, իրենց շրջաններում: Բայց, Գրիգորյանների նախարարական-ավատատիրական դատիրավասությունից դեռ չի բխում և չէր կարող բխել դատական բարձրագույն իշխանություն ամբողջ երկրի ծավալով: Սակայն, Գրիգորյանները շահում էին նրանով, որ կաթողիկոսությունը նրանց տոհմի ժառանգական արտոնությունն էր, ինչպես օրինակ, սպարապետությունը՝ Մամիկոնյանների կամ ասպետությունը՝ Բագրատունիների: Եթե Գրիգորյանները դատական իշխանություն ունեին ամբողջ երկրի վրա նաև աշխարհական գործերով, ապա դա կարող էր կապված լինել միայն կաթողիկոսության հետ: Արդ՝ ընդունենք պայմանականորեն, որ «մեծի դատաւորութեան գործակալութիւնը» Գրիգորի, ուրեմն և Գրիգորյանների, սեփական իշխանությունն էր որպես կաթողիկոսների: Հետևում է այստեղից, որ դատական բարձրագույն իշխանությունը ամբողջ երկրի ծավալով պատկանում էր կաթողիկոսին: Ամենևին ոչ: Ուսումնասիրողները, այդ թվում և Ն. Աղոնցն ու Հ. Մանանդյանը, անշուշտ, նշում են, որ կաթողիկոսի այդ պաշտոնը Փավստոսն անվանում է գործակալություն, բայց անհրաժեշտ ուշադրություն չեն դարձրել հենց այդ բառի վրա: Մեծանուն Հ. Մանանդյանը լավագույնս ցույց է տվել, որ գործակալությունները պետական կյանքի կառավարման որոշակի բնագավառներն էին համապատասխան հաստատություններով: Դրանցից էին մարդպետությունը, հազարապետությունը, սպարապետությունը և այլն: Գործակալությունները գլխավորում էին նախարարական խոշոր տների ներկայացուցիչները: Բայց, գործակալությունները որքան էլ նախարարական տների ժառանգական արտոնությունը լինեին, այնուամենայնիվ գործակալները նշանակվում էին թագավորի կողմից, այլ կերպ՝ նրանք պետության բարձրաստիճան պաշտոնյաներն էին և որպես այդպիսիք՝ ստորադրված էին թագավորական իշխանությանը, թագավորի գործակալներն էին: Թվարկված գործակալություններից մեկն էլ «մեծ դատավորության» գործակալությունն էր: Իրերի վիճակը չի փոխվում, եթե, նույնիսկ, ընդունենք էլ, որ այդ գործակալության գլուխը, ղիցուք, կաթողիկոսն էր: Գործակալը գործակալ է մնում: Ուրեմն, ինչպես մյուսները, այնպես էլ արդարադատության բնագավառը ղեկավարող գործակալը ստորադրված էր թագավորին և ենթարկվում էր նրա գերագույն իշխանությանը: Այսպիսով, դատական աստիճանակարգության գլուխը, դատական իրավասության բարձրագույն կրողը թագավորն էր:

Բայց, դատական աստիճանակարգության գլուխը լինելով հանդերձ, թագավորը, զուցե, գլխավորում էր դատական մի այնպիսի համակարգ, որի յուրաքանչյուր օղակը վայրընթաց գծով գտնվում էր բացառապես հոգևորականների ձեռքում, ինչպես գրել են ոմանք: Դարձյալ ո՛չ: Բերենք մեր ձեռքի տակ եղած բազմաթիվ փաստերից մի քանիսը:

Ազաթանգեղոս. «Իսկ թագաւորն Տրդատիոս... հրաման ետ ի ժողով կոչել միարանութեամբ ամենայն զօրացն իւրոց... Եւ կուտեցան... մեծամեծք և կու-

սակալք, գաւառակալք, պատուաւորք, պատուականք, զօրավարք, պետք և իշխանք, նախարարք և աղաաք, դատաւորք և զօրագլուխք, և հասեալ կային առաջի թագաւորին»<sup>5</sup>:

Փաւստոս. «Ապա առաւել ժողովեցան ի մի ժողով միարանութեանն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, աղաաք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք»<sup>6</sup>:

Այս վկայութիւնների համաձայն աշխարհական դատավորները կարևոր պաշտօնյաներ են, որովհետև որպէս կանոն հրավիրվում են աշխարհաժողովներին: Աշխարհական դատավորների հաստատութիւնը քրիստոնյա Տրդատի նորամուծութիւնը չէր. այն կար հին ժամանակներից և հարատեւց մինչև ուշ միջնադար: Պատմահայրը հաղորդում է. «Եւ օրէնս իմն հաստատէ ի տան թագաւորութեան իւրոյ, և ժամս որոշէ ելից և մտից և խորհրդոց և խրախճանութեանց և զրոսանաց: Եւ կարգս զինուորութեանց, և նոցունց առաջինս և երկրորդս և երրորդս, և որ ի կարգին ... Իրաւարարս ի տանն արքունի, իրաւարարս և ի բաղարս և յաւանս»<sup>7</sup>:

Այս բարեփոխութիւնները խորենացին վերագրում է Հայաստանում Արշակունցյաց հաստատութիւն հիմնադրին՝ Վաղարշակին<sup>8</sup>: Ուրեմն խոսքը վերաբերում է մեր թվականութիւն առաջին դարին: Գրականութիւն մեջ կարծիք կա, թէ պարզ չէ «իրաւարար» բառի իմաստը պարբերութիւն: Ավելին. սկազեմիկոս Հ. Մանանդյանն առհասարակ նշանակութիւն չի տալիս խորենացու այդ հաղորդմանը: Նա գրում է. «Իհարկե, հնարավոր և հավանական է, որ Տրդատ Ա-ը կարող էր բարեփոխած լինել իր թագավորութիւն ներքին կարգերը, սակայն այդ մասին մենք ստույգ և արժանահավատ տեղեկութիւններ չունենք»<sup>9</sup>: Մեծավաստակ գիտնականի թերհավատութիւնը պայմանավորված է, զուցե, նրա ընդհանուր կարծիքով խորենացու մասին: Համենայն դեպս, ոչ հեռու անցյալում հայտնաբերված փաստերը, ընդհակառակը, նորից հաստատում են խորենացու ստույգութիւնը ընդհանրապէս և բնավոր վկայութիւն արժանահավատութիւնը գեթ մի կետում՝ մասնավորապէս: Խոսքը մի փաստաթղթի մասին է, որ հայտնաբերվել է 1933 թ. փետրվարի 24-ին, Եփրատի աջ ափին, ներկա Սալիհիյե դյուզի մոտ գտնվող Գուրա-Եվրոպոս մակեդոնական-պարթևական շաղաքի ավերակները պեղելիս, և որը վերաբերում է, ինչպէս և խորենացու հաղորդումը, մեր թվականութիւն առաջին դարին (Dura Pergament 21): Պրոֆ. Բրադֆորդ Վելլեսը գրում է. «Ներկա փաստաթուղթը կազմվել է Գուրայի թագավորական դատարանի առաջ (δὲν τὸν αὐτόν: βασιλικὸν δικαστήριον) — ինչպէս բնագրում է — Ն. Ք.): Վկաների թվում առաջին տեղում գտնվում են թագավորական երկու դատավոր ... Համակարգը թագավորական լիազոր ներ-

5 «Ազգաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, էջ 412, ՃԺԱ:

6 «Փաւստոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1932, էջ 54, III ԻԱ:

7 «Մովսիսի խորենացույ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 117, 2-րդ 8:

8 Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է ոչ թէ անձը, որի հետ կապում են երևույթը, այլ հենց ինքը՝ երևույթը, որ պատմիչը, բնականաբար, կապելու էր որևէ անձի հետ: Այս իմաստով նշանակութիւն չունի Վաղարշակի պատմականութիւն հարցը, այսինքն այն հարցը, թէ ով է ներկայացված նրա անվամբ՝ Տրդատը, ինչպէս ընդունված է, թէ պատմական Վաղարշակ Բ-ն, ինչպէս ենթադրում է Հ. Մանանդյանը («Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութիւն», հ. Բ, մաս Ա, Երևան, 1957, էջ 58): Տե՛ս նաև Գ. Խ. Տարկեսյան, Կոնստանտնուպոլիս, 1960, էջ 20—23:

9 «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութիւն», հ. Բ, մաս Ա, էջ 14:

կայացուցիչների ... որոնք ներքաղաքային հարաբերություններում հետապնդում էին թագավորի շահերը, այժմ այլևս չեն թվում տեղ-տեղ գոյություն ունեցող և մենք ակնհայտորեն պետք է ենթադրենք, որ այդպիսի դատավորներ ծառայում էին ո՛չ միայն Դուրայում, այլև ընդհանրապես քաղաքներում, գոնե, սելևկյան պետության արևելյան մասում, ինչպես և պարթևական ամբողջ տերության մեջ»<sup>10</sup>: Պարթևական պետության քաղաքներում թագավորական դատարանների ու դատավորների գոյությունը հաստատող այս արժանահավատ տեղեկությունը նոր լույս է սփռում Խորենացու հաղորդման վրա, որի համաձայն մեր թագավորը նշանակեց «իրաւարարս ի տանն արքունի, իրաւարարս և ի քաղաքս և յաւանս»: Ուշադրություն դարձնենք. Խորենացու վկայությամբ էլ դատավորներ նշանակվել են քաղաքներում, և այս կողմից էլ Պատմահոր հաղորդումը համահնչյուն է Դուրայի փաստաթղթին: Հաստատվելով Հայաստանի գահի վրա և վերջինի ամբությունն ապահովելուց հետո, նոր հարստության հիմնադիրը, բնական է, որ զբաղվելու էր իր տերության ներքին գործերով: Հայ պարթևի կողմից Հայաստանի քաղաքներում նշանակված դատավորները, բնականաբար, չէին տարբերվելու նրա ավագ գահակիցների կողմից պարթևական քաղաքներում կարգված թագավորական դատավորներից:

Շահապիվանի ժողովի ժՁ կանոնում կարդում ենք. «Եպիսկոպոս ոք կամ երէց, կամ ազատ ոք ի դատաւորաց»<sup>11</sup>: Այս կանոնից շատ պարզ երևում է, որ կային պաշտոնյաներ, որոնք հատկապես դատավորներ էին միայն և որ նրանք ազատներից էին, այսինքն՝ աշխարհականներից: Աշխարհական դատավորները քննում էին կամ նրանց մասնակցությամբ էին քննվում կարևորագույն գործեր: Նույն ժողովի Ի կանոնը սահմանում է. «Ապա եթէ յոստիկանի»<sup>12</sup> ի տան գտցի պղծութիւնն... կայցին միարան պղծագործ ընտանեաւքն հանդերձ եւ ի հրապարակ ածցեն եւ առաջի գլխաւոր եպիսկոպոսին եւ առաջի մեծամեծաց իշխանացն եւ աւագ դատաւորաց, եւ միարան վրէժխնդիր լինիցին արինացն Աստուծոյ»<sup>13</sup>: Դարձյալ՝ բացի եպիսկոպոսներից ու իշխաններից, որոնք միաժամանակ նաև դատավորներ էին վարչա-կառավարչական իրենց լայն իրավասության ու լիազորությունների ուժով, և աշխարհական շարքային դատավորներից, կային նաև աշխարհականներից ավագ դատավորներ, որոնց գործը հենց դատավորությունն էր: Դատելով այն գործերից, որ քննում են սրանք, պետք է եզրակացնել, որ ավագ դատավորները արդարադատության իրականացման բնագավառում խաղում են նշանակալի դեր: Դա ընդգծվում է նաև այն հանգամանքով, որ դատական աստիճանակարգության մեջ ավագ դատավորների դատական իրավասությունը ներկայանում է նույն բարձրությամբ ինչ և իշխաններինն ու եպիսկոպոսներինը:

<sup>10</sup> Dura pergament 21. Hypothek und Exekution am Euphratufer in 1. Jahrhundert n. Chr. von. C. Bradford Welles, ի Zeitschrift der Savigny-Stiftung für Rechtsgeschichte, Romanistische Abteilung, LVI Band, Weimar, 1936, էջ 105--106:

<sup>11</sup> «Կանոնգիրք հայոց», հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, էջ 455:

<sup>12</sup> Դոկտոր Լ. Ս. Խաչիկյանը ուղղում է. «ոստիկան»-ը՝ «ոստանիկ» համաձայն մեր Մասենադարանի № 659 կանոնգրքի (տե՛ս «Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից», Երևան, 1951, էջ 76, ծանոթագր. 2): «Ոստիկան» բառի նշանակության մասին միջնադարյան Հայաստանում տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյանի ուշադրավ հղվածը՝ «Իրադրություններ «ոստիկան» բառի մասին», «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 4, էջ 243—248, որտեղ հոդվածագիրը, սակայն, չի օգտագործել Շահապիվանի ժողովի Ի կանոնը:

<sup>13</sup> «Կանոնգիրք հայոց», հ. Ա, էջ 465:

Վկայակոչված փաստերը, ինչպես և բազմաթիվ այլ տվյալներ ցույց են տալիս, որ Արշակունյաց հարստութեան (նաև Մարզպանութեան) ժամանակ հոգևոր-եկեղեցական ատյաններից բացի կային պետական (աշխարհական) դատարաններ երեք աստիճանով. գերագույն՝ թագավորական (մարզպանական), միջին՝ իշխանական և ավագ դատավորների, ստորին՝ դատավորների:

Աշխարհական դատարանների համակարգը կար ոչ միայն Բագրատունյաց, այլև Զաքարյանների շրջանում: Մխիթար Գոշի Դատաստանագրքի համաձայն ժԲ—ժԳ դարերի Հայաստանի դատարանային համակարգը ներկայանում է հետևյալ ձևով. պետական դատարաններ (թագավորական, իշխանական, ստորին), ավատատիրական-ավատապետական դատարաններ (դասային, տիրունական) և հոգևոր-եկեղեցական ատյաններ (ժողով, կաթողիկոսական, եպիսկոպոսական, քահանայական)<sup>14</sup>: Դատարանային այս համակարգում թագավորական դատարանի առկայութունը տարօրինակ շպետք է թվա այն պատճառարանությամբ, թե այն ժամանակ երբ գրվել է Դատաստանագիրքը, չկար թագավոր ոչ մայր հայրենիքում և ոչ Կիլիկիայում: Նախ, ժԲ դարի վերջերին ներքին և արտաքին իրադարձութունները դարգանում էին այն ուղղությամբ, որ կարող էին տանել և Կիլիկիայում, իրոք, տարան դեպի թագավորութեան վերականգնում: Մխիթարն ընդառաջում էր ցանկալի գալիքին և Դատաստանագիրքը գրելիս, անշուշտ, նկատի ուներ հայկական թագավորութեան վերականգնման իրական հնարավորութունը: Երկրորդ, ճիշտ է, թագավորական դատարանը դեռ չկար, այն պետք է ստեղծվեր թագավորութեան վերականգնումով, բայց այդ դատարանը Մխիթարի երևակայութեան արդյունքը չէր, այլ իր իրական օրինակն ուներ պետական-թագավորական կյանքի նախորդ շրջանում:

Ի մի բերելով վկայակոչված և շատ այլ փաստեր կարող ենք արձանագրել:

Հայկական պետականութեան պայմաններում դատական իրավասութեան բարձրագույն կրողը եղել է մարմնավոր գերագույն իշխանավորը՝ թագավորը: Հոգևոր ատյաններից բացի եղել է աշխարհական դատարանների համակարգը իր ընդդատութեան գործերով, որոնք ընդգրկում էին քրեական արդարադատութեան համարյա ամբողջ բնագավառը և բազմաբացիականի մի մասը:

Օտար տիրակալութեան ժամանակ, եթե, սակայն, պահպանվել է աշխարհական համադրային իշխանութունը կամ երկրի այն շրջաններում, որտեղ մնացել են հայկական իշխանութուններ, դատական իրավասութունը բաժանված է եղել սրանց և հոգևոր մարմինների միջև, ինչպես նախորդ դեպքում, բայց կաթողիկոսի դերի նկատելի ուժեղացմամբ և երկուսի համար էլ այն ընդհանուր սահմանափակումով, որ պայմանավորված էր օտարակալությամբ:

Հայկական իրավունքի պատմութեան մեջ հոգևորականութունը եղել է դատական իրավասութեան միակ կրողը այն շրջաններում և այն ժամանակ, որտեղ և երբ ազգային մարմնավոր իշխանութուն չի եղել և որքանով այդպիսի իրավասութուն արտոնվել է տիրողների կողմից:

Թվարկելով մի շարք գործեր, որոնք Մխիթար Գոշի Դատաստանագրքի համաձայն ընդդատյա են աշխարհական ատյաններին, պրոֆ. Խ. Սամուելյանը գրում է. «Հոգևոր դատարանները, որպես ավելի ազդեցիկ ու տարածված հիմնարկութուններ, ընդունակ էին միշտ իրենց վրա վերցնել այդ տեսակ իրա-

<sup>14</sup> Այդ կապակցությամբ ավելի մանրամասն տե՛ս մեր հոդվածը՝ «Դատարանային համակարգը Միջնադարյան Հայաստանում ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի», «Տեղեկագիր», 1965, № 12:

վարանական կազուսների վճիռներն և յուրաքանչյուր բողոք անխափան ներս խուժել աշխարհական ու եկեղեցական դատաստանների իրավասությանց տարբերող սահմանների որոշման մեջ»<sup>15</sup>: Մենք շենք կարող նշել ոչ մի փաստ Գատաստանագրքում, ոչ մի հոդված, որից հետևեր, թե օրինակ՝ եպիսկոպոսական ատյանը իրավասու էր փոխել իշխանական դատարանի վճիռը, կամ իշխանական դատարանից վերցնելով կարող էր իր վարույթի տակ առնել մի գործ, որը նախապես արդեն ընդգատյա էր առաջինին և այլն: Գատաստանագիրքը ոչ մի հիմք չի տալիս ասելու, թե հոգևոր ատյանները իրավական (իրավական և ոչ թե «պատուի աղաղակ») որևէ գերազանցություն ունենին աշխարհական դատարանների համեմատությամբ: Ընդհակառակը, հոգևոր և մարմնավոր ընդգատյան գործերի քիչ թե շատ որոշակի սահմանադատումը, որ տվել է Մխիթարը, խոսում է այն մասին, որ այդ դատարաններից յուրաքանչյուրը ուներ գործունեության իր բնագավառը, որի սահմաններում նրանք անկախ էին իրարից իրավականորեն: Երկու բնույթի այդ դատարանների իրավական գերազանցության հարցը ընթանում է յուրաքանչյուրի համար իր գծով, երկուսի վերաբերյալ էլ հանգելով աշխարհական բարձրագույն իշխանությանը: Այդպես էր իրավունքի համաձայն. ինչ վերաբերում է դատա-իրավական գործնական առօրյային, ապա այս դեպքում որոշիչը ոչ այնքան իրավունքն էր, որքան իշխող դասակարգի երկու դասերի ուժերի իրական հարաբերությունը ամբողջ երկրի ծավալով ընդհանրապես և յուրաքանչյուր տվյալ շրջանում՝ մասնավորապես:

Քանի որ Հայաստանում կային երկու բնույթի դատարաններ՝ հոգևոր և աշխարհական, ուստի տեսնենք, թե դրանցից յուրաքանչյուրը ինչ կարգի գործեր էր քննում: Հասկանալի է, որ ամենից առաջ պետք է հետաքրքրի բրեական գործերի ընդգատյան հարցը: Մովսես Խորենացին հաղորդում է, որ Վաղարշակը նշանակեց «Եւ յիշեցուցանողս երկուս ի ձեռն գրոյ. այլ ոմն զբարի յիշողութիւնս առնելով, և այլ ոմն զվրէժխնդրութեանցն»<sup>16</sup>: Պատմահայրը այսպես է ներկայացնում այդ պաշտոնյաների պարտականությունները. «Եւ բարւոյ յիշեցուցանողին հրաման տայ՝ ի բարկութեանն արբայի և յանիրաւ հրամանս՝ յիշեցուցանել զիրան և զմարդասիրելն»<sup>17</sup>: Երկրորդ պաշտոնյայի կոչումը, ինքնին, արդեն պարզում է այն բանը, որով Պատմագիրը բնութագրում է նրա պարտականությունը՝ վրեժխնդրություն: Այս պաշտոնյան պարտավոր էր ամեն անգամ զբավոր հիշեցնել արբային վրեժխնդրության անհրաժեշտության մասին: Այսինքն՝ հարց էր բարձրացնում բրեական հետապնդում սկսելու, գործ հարուցելու մասին: Վրեժխնդրության մասին զբավոր հիշեցնողը, այսպիսով, ներկայանում է որպես մի զլխավոր դատախազ, որպես հանրային-պետական մեղադրող, որը ի պաշտոնե, ex officio պարտավոր էր հետապնդում սկսելու հանցագործի դեմ կամ հանցագործության փաստի առթիվ: Իհարկե, շպետք է կարծել, թե հանրային-պետական մեղադրողը հետապնդում էր սկսում ամեն մի հանցագործության կապակցությամբ: Նրա հանդես գալու առիթները առաջին հերթին, հավանաբար, այն հանցավոր արարքներն էին, որոնք ուղղված էին թագավորի «գանձի» ու գահի դեմ կամ ընդհանրապես բրեական այն

<sup>15</sup> «Մխիթար Գոշի Գատաստանագիրքն ու հին հայոց քաղաքացիական իրավունքը», էջ 140—141:

<sup>16</sup> «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց», 2-րդ, 8, էջ 117:

<sup>17</sup> Անդ:

գործերը, որոնք ընդդատյա էին թագավորին: Միջնադարյան Հայաստանում իշխանութիւնների կողմից հանցագործին ի պաշտոնն հետապնդելը, ինքնին, շատ ուշագրավ երևույթ է, որին այստեղ հանգամանորեն անդրադառնալ շինք կարող<sup>18</sup>: Նշենք միայն, որ Խորենացու վկայութեան համաձայն քրեական կարևոր գործերը ընդդատյա էին թագավորական դատարանին:

Եզնիկ Կողբացին, անշուշտ, իր ժամանակի դատա-իրավական առօրյան նկատի ունեւր, երբ արձանագրում էր. «Արդ, յետ այսր ամենայնի հաւանութեանց յամառեալ զնոյն ի մէջ բերեն. բնութեամբ են՝ ասեն՝ շարիք, և ոչ կամածինք»:

Ասեմք. եթէ բնութեամբ իցեն, ընդէ՞ր օրէնք ի թագաւորաց զնիցին, և սաստի ի յիշխանաց և պատիժի ի դատաւորաց, ո՞չ ապաքեն վասն կարճելոյ շարեացն: Եւս, թէ բնութեամբ իցեն շարիքն՝ ոչ պարտի օրէնսդիրն օրէնս զնել, և ոչ իշխանն պատիժս ի վերայ շարագործին ամել ... Իսկ եթէ տեսանեմք՝ թէ քաղաւորն զիւրոց օրինաց վրէժս պահանջէ, և պահանջմամբ վրիժուցն զվնասն կարճէ, և դատաւորն զգողն և զաւագակն պրկէ և Բերէ վասն զվնասակարութիւնն ի միջոյ բառնալոյ, և հայր զորդի դժնեայ մահապարտեալ՝ դատաւորաց մատնէ, և այլքն ամենեքեան զիւրաքանչիւր զանցնիւր զանարգանաց վրէժս պահանջեն՝ կամ անձամբ կամ իշխանօք»<sup>19</sup>: Այս վկայութեան համաձայն քրեական արդարադատութիւնը, հավանաբար նաև քաղաքացիականը նշանակալի շափով, վերը նշված երեք դատարանների իրավասութեանն է ենթակա: Ինքը՝ թագավորն է վրեժ պահանջում իր սահմանած օրենքների խախտման համար, իշխանն է պատժում և դատաւորը՝ սաստում: Բոլոր դեպքերում, առհասարակ, վրեժ են պահանջում ոչ թե «եպիսկոպոսօք», այլ «իշխանօք», ուրեմն քրեական գործերը ընդդատյա էին ոչ թե հոգևոր ատշաններին, այլ՝ աշխարհական:

Այդպես էր նաև Բագրատունիների ժամանակ, նկատի ունենալով Ասողիկի վկայութիւնները և այլ փաստեր. այդպես էր նաև Զաքարյանների ժամանակ, ինչպես կտեսնենք ստորև, հիմնվելով զլիսավորապես Գատաստանագրքի վրա:

Միակողմանի շինելու համար ժանոթանանք նաև այն փաստարկներին, որ բերել են իշխող տեսակետի կողմնակիցները: Այս դեպքում ամենից առաջ պետք է նկատի ունենալ Վ. Բաստամյանցին, որովհետև նա առաջինն է, որ աշխատել է հիմնավորապես ապացուցել այդ տեսակետը. մյուսները՝ այսպես թե այնպես կրկնել են նրան: Նշենք նաև, որ Վ. Բաստամյանցը հայ իրավունքի պատմադիտութեան հիմնադիրն է, այդ գիտութեան սակավաթիվ ներկայացուցիչներից ու մեծ երախտավորներից մեկը: Մեծաթիվ շեն նրա գործերը, բայց բարձրարժեք են խիստ: Եվ եթե նրա ու այլոց որոշ տեսակետները վերանայելու փորձեր են արվում այսօր, ապա այն դիտակցումով, որ դրանք շակումներ են միայն ոչ-ճիշտ դրված մի քանի աղյուսների, այն շենքում, որ կառուցել են նրանք: Վ. Բաստամյանցը գրում է. «Ժողովրդի համար ավելի օգտակար է ու ձեռնառու, որ քրեական գործերի դատաստանը լինել ոչ թե մարմնավոր, այլ հոգևոր իշխանութեան ձեռքին, որովհետև այդ իշխանութիւնը միշտ ավելի

<sup>18</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս մեր գիւերտացիոն աշխատութիւնը — «Գատարանակազմութիւնն ու դատաւարութիւնը միջնադարյան Հայաստանում ըստ Մխիթար Գոշի Գատաստանագրքի»:

<sup>19</sup> Եզնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, Թիֆլիզ, 1914, Ա, ԺԵ, էջ 42: 43:

ներողամիտ էր և գործածում էր միշտ ավելի թեթև, միայն ուղղեցուցիչ պատիժներ—զանազան տեսակ ապաշխարանքներ»<sup>20</sup>: «Այս դատողությունը ավելի քան միամիտ է,— պատասխանում է ն. Մելիք-Քանգյանը,— սպանողի համար ճշմարիտ է, շատ նպաստավոր է հոգևոր դատարանին դիմելը, որովհետև միամիայն ապաշխարանք կրելով հանցանքից կազատվի, բայց... ո՞ր մարդը կհամաձայնի յուր եղբոր սպանողին ազատ համարել պատժից... Հապա եթե հանցավորը պնդագլուխ է և եկեղեցական ապաշխարանք կրելու ոչ հակամեա, ինչ պիտի անի եկեղեցական դատարանը, ոչինչ, նա պիտի այն ժամանակ նզովքի ենթարկի այդպիսի անձին: է այսպիսով աշխարհն կարելի է կառավարել, իհարկե ոչ»<sup>21</sup>:

Վ. Բաստամյանցն, այնուհետև հենվում է Շահապիվանի ժողովի 20-րդ կանոնի և, մանավանդ, այնտեղ գործածված «չարագործ» բառի վրա: Ենթադրելով, որ այդ բառը կիրառվել է «ոչ անառակության իմաստով, այլ յուր պարզ և սովորական իմաստով», եզրակացնում է. «Հիրավի եկեղեցական իշխանության ձեռքին էր քրեական գործերի դատաստանը»<sup>22</sup>: ն. Մելիք-Քանգյանը ոչ առանց հիմքի պնդում է, որ «չարագործ» բառի տակ կանոնում պետք է հասկանալ մեղսեականներին: Առայժմ թողնենք, թե «չարագործ» բառի մեկնությունից որն է ճիշտ և ուշադրություն դարձնենք նույն՝ 20-րդ կանոնի հետևյալ հատվածի վրա, որը դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից. «Ապա եթե եպիսկոպոսն ջանացաւ եւ վրէժխնդիր եղեւ, եւ երիցունքն եւ այլ մարդիկն վկայեացեն զաշխատութենէ եպիսկոպոսին, որ զչարագործն յայտ աբար իշխանութեան ուրում, եւ իշխանն, որ էր յաշխարհին եւ գեաղջ ուրում աագ, նախարար՝ տէր գաւառին, կամի պղծութեանն քիկունք լինել եւ զնացողսն զաղել եւ քափուցանել կամ վասն կորուսիչ արծաթոյ կամ վասն ակնառութեան եւ ծառայութեան, եւ ոչ ընտրեսցէ զՔրիստոս սիրել... եղիցի նզովեալ այնպիսին եւ յեկեղեցոյ սրբոյ ի բաց կացցէ մինչեւ տացէ զպղծագործսն ի ձեռս եպիսկոպոսին»<sup>23</sup>: Ընդգծված տողերից ակնհայտ է, որ «չարագործի» մասին եպիսկոպոսն հայտնում էր մարմնավոր իշխանությունը՝ իշխանին, գեղջավազին, նախարարին և սրանք էին, որ պատժիչ միջոցներ էին կիրառում զանցառուի նկատմամբ: Եթե «չարագործի» տակ հասկանանք հանցագործին, բառի քրեաիրավական իմաստով, ինչպես ընդունում կամ ենթադրում է Վ. Բաստամյանցը, ապա քրեական գործերը ընդգատյա էին մարմնավոր իշխանությունը: Իսկ եթե «չարագործի» տակ հասկանանք հանցագործին, բառի կրոնա-եկեղեցական իմաստով, տվյալ դեպքում աղանդավորին, ինչպես բացատրում է Մելիք-Քանգյանը, ապա նրան պատժելը դարձյալ կախված էր աշխարհական իշխանությունից, որովհետև եթե վերջինս ինչ-ինչ պատճառներով կամենար հուսանավորել-պատսպարել հանցագործին, հոգևոր մարմինները ոչինչ չեն կարող անել, բացի աշխարհական իշխանավորին նզովելուց: Այսպիսով, այս կանոնը ևս հաստատում է, որ քրեական գործերն ընդհանրապես և հոգևոր-եկեղեցական գործերով մարմնական-նյութական պատիժների կիրառումը՝ մասնավորապես, պատկանում էր աշխարհական իշխանություն իրավասությունը:

20 «Յառաջարանութիւն», էջ 69:

21 «Հայոց եկեղեցական իրավունք», Բ գիրք, Շուշի, 1905, էջ 225—226:

22 «Յառաջարանութիւն», էջ 73:

23 «Կանոնդիրք հայոց», հ. Ա, էջ 463—464:



Վ. Բաստամյանցը, վկայակոչելով ներսես Բ կաթողիկոսի Բ, Ժէ, Ի, ԻԹ, ՂԱ և ՂԳ (նաև Գրիգոր Լուսավորչի 15 և 16-րդ) կանոնները, գրում է. «Այս կանոնների մեջ հիշված բոլոր հանցանքները — մարդասպանություն, գողություն, ավազակություն, հրձիգություն և այլն, զուտ քրեական են, բայց երբ հոգևոր իշխանությունը նշանակում է զոցա համար եկեղեցական ապաշխարություն, ուրեմն զոցա դատաքննությունը նորա ձևովն էր»<sup>24</sup>: Ն. Մելիք-Քանգյանը առ այս նկատում է. «Այդ ոմն ներսեսի 42 կանոնն բոլորովին անվավեր են և անհիմն, կցկտուր և միմյանց հակասական ... Սրանց վրա վստահանալ և սրանց հիմամբ եզրակացություն անել, չի կարելի...»<sup>25</sup>: Ավելացնենք. բննվող հարցի տեսանկյունից ամենևին նշանակություն չունի հակասական կամ վավերական են թե ոչ ներսես Բ-ի կանոնները: Միանգամայն վավերական և ոչ հակասական շատ կանոններ, թե՛ ազգային և թե՛ օտար ծագումով, քրեական մի շարք հանցագործությունների համար ապաշխարություն են սահմանում: Բայց, այդ կանոնների հիման վրա, այնուամենայնիվ, չի կարելի եզրակացնել, թե Հայաստանում, ինչպես Մխիթարից առաջ, այնպես էլ նրա ժամանակ, քրեական գործերն ընդդատյա էին հոգևոր ատյանին, այն պարզ պատճառով, որ նման դեպքում ապաշխարությունը միայն լրացուցիչ պատիժ է եղել: Վկայակոչենք մի քանի փաստ: «Եթէ այր զկին սպանցէ յաղագս պոռնկութեան, արեան դատաստան լիցի բովանդակ, զի ի տեանէ արձակել հրամայեցաւ եւ ոչ սպանանել... Իսկ եթէ կին զայր զեղօք եւ կամ այլ օրինակաւ, նոյն լիցի դատաստան: Եւ ապաշխարութիւն յաղագս տուգանին քերկ լիցի: Բայց մի ոք զապաշխարութիւնն հայցիցէ ի գիրս դատաստանի, զի այդ կանոնաց է եւ է ոգույ, իսկ սա մարմնույ...»<sup>26</sup>, կամ՝ «որք միանգամ իրք դատաստանի են եւ տուգանին, պէտք են եւ ապաշխարութեան: Եւ քանզի կանոնք եւ դատաստանք այնու բաժանին ի միմեանց, զի զժածուկ եղեալ յանցանս, որոց եւ պէտք իցեն տուգանի՝ հրամայէ՛ առնել ողորմութիւնս իսկ դատաստան՝ քէ եւ տուգանէ՛ ոչ բառնայ զապաշխարութիւնն: Սակայն ներմամբ եւ փորձի լիցի իմաստնոց, յաղագս որոյ յամենայն իրս դատաստանի զապաշխարութիւնն ի կանոնսն քողաք»<sup>27</sup> և այլն:

Ինչպես տեսնում ենք, Մխիթարն ասում է, որ դատաստանը, այսինքն՝ իրավական պատիժը կամ փոխհատուցումը չի վերացնում հոգևոր-եկեղեցական պատիժը՝ ապաշխարությունը: Պարզվում է միաժամանակ, թե ինչու կանոններում ապաշխարություն է սահմանված քրեական հանցագործությունների համար, որովհետև «որք միանգամ իրք դատաստանի են եւ տուգանին, պէտք են եւ ապաշխարութեան»: Եվ որովհետև ապաշխարություն կարող է նշանակել միայն հոգևոր իշխանությունը, ուստի Դատաստանագիրքը սահմանում է միայն նյութական-մարմնական պատիժը, ապաշխարությունը թողնելով եկեղեցուն:

Աստծու պատվիրաններից ամեն մի շեղում գործով, խոսքով, նույնիսկ՝ մտովի, քրիստոնեական վարդապետության համաձայն, համարվել է մեղք, այդ բառի կրոնա-եկեղեցական իմաստով: Առավել ևս մեղք է համարվել հանցագործությունը, մանավանդ՝ սպանությունը: Հանցագործությունը մի մեղանշանք է աստծու, աստվածագիր օրինականության դեմ: Մեղանշողը պետք է քափի իր մեղքը: Քավության գլխավոր միջոցներից մեկը ապաշխարանքն է:

24 «Յառաջարանութիւն», էջ 74—75:

25 «Հայոց եկեղեցական իրավունքը», Բ գիրք, էջ 225:

26 «Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք հայոց», էջ 115:

27 Անդ, էջ 361, տե՛ս նաև էջ 197, 349 և այլուր:

Ապաշխարողը իր մեղքի անկեղծ խոստովանությամբ, ամենօրյա ջերմեռանդ աղոթքով՝ ի խորոց սրտի անխառն զղջանքով աստուծուց ներումն է հայցում: Ի վերջո, աստված ներում է նրան և վերադարձնում եկեղեցու գիրկը: Մի խոսքով՝ ապաշխարությունը, հայտնի առումով, հաշտության միակողմանի պայմանագիր է աստծու և հանցագործի միջև, որի մեջ տուժողի շահերը անտեսված են: Բայց, աստծուն բավարարելուց բացի պետք է բավարարել և տուժողին, աստվածադիր օրինականությունից բացի՝ նաև մարդագիր օրինականությունը: Ապաշխարանքը անմիջական այդ գոհացումը տալ չի կարող և որպես հանրային անվտանգությունն ապահովող միջոց նվազ գործոն է, ուստի այն չի կարող վերացնել կամ իրենով փոխարինել արարքի քրեա-իրավական հետևանքները: Դատաստանագրքի երեք խմբագրությունն էլ ընդգծում են այդ իրողությունը, հիմք տալով մեզ ասելու, որ ոչ միայն Մխիթարի հայացքն է դա, այլև իրական կյանքի դատա-իրավական առօրյան: Դատաստանագրքում կարգում ենք. «Գիրս դատաստանի զնմանութիւն կանոնաց ունի ...նւ արդ այսպէս ունին զնմանութիւն առ միմեանս. զի կանոնք հոգւոյ ուղղիչ է եւ դատաստան մարմնոյ, եւ թէպէտեւ ի միմեանց բաժանեալք են, բայց ի բազում իրս միաւորին, որպէս եւ հոգի եւ մարմին, զի բնութեամբ երկու են եւ անշփոթ, խառնեալք ընդ միմեանս լինին մի եւ ի բազում իրս մի կամօք գործեն զիրան: Նոյնպէս եւ կանոնքն եւ դատաստանս: Վասն այնորիկ քէպէտեւ պատահի ի միասին խառնիլ երկուցն, բայց ոչ լուծանեն զմիմեանս»<sup>28</sup>: Կանոնը հոգու ուղղիչն է, Դատաստանագիրքը՝ մարմնի և կթե պատահում է, որ կանոնականն ու աշխարհական-իրավականը միասին են հանդես գալիս, ապա՝ «ոչ լուծանեն զմիմեանս»: Կանոնական պատիժը չի վերացնում քրեա-իրավականը, ինչպես որ վերջինս էլ չի վերացնում կանոնականը, թեև կանոնականը հաճախ կամ երբեմն ածանցական է իրավականից:

Այսպիսով՝ քրեական ծանր հանցագործությունների համար կանոնների սահմանած ապաշխարությունը եկեղեցու իրավասություններով պայմանավորված հոգևոր-կանոնական լրացուցիչ պատիժն է լոկ ի վերա մարմնական նյութական այն պատժի, որ նշանակում էին աշխարհական ատյանները, որոնց և ընդդատյա էին այդ գործերը:

Միջնադարյան Հայաստանում ընդդատության<sup>29</sup> վերաբերյալ ավելի մանրամասն ու ամբողջական պատկերացում կարելի է կազմել Մխիթար Գոշի Դատաստանագրքի հիման վրա, որեմն ծանոթանանք նրա տվյալներին: Այս դեպքում, թվում է վստահելի ուղեցույց կարող է լինել Դատաստանագրքի Բ խումբագրությունը, որտեղ, ի տարբերություն ԱԳ խմբագրությունների, հոգվածները տարադատված են երկու մեծ բաժնի մեջ՝ եկեղեցական և աշխարհական դատաստան անվանումներով և նախագրության Ե գլխում էլ ասված է, որ թագավորն ու իշխանը «զաշխարհի դատաստանս հոգայցեն... իսկ զեկեղեցուց դատաստան եպիսկոպոսն հոգասցէ»: Այս փաստերից արտաբուստ համոզիչ այն տպավորությունն է ստեղծվում, որ աշխարհական ատյաններին ընդդատյա էին Դատաստանագրքի աշխարհական մասում խմբավորված հոգվածներով նախատեսվող դիպվածները, իսկ եկեղեցական դատարաններին՝ եկեղեցական մասում նախատեսված դիպվածները: Որքան էլ վստահելի թվա այս ուղեցույցը, այնուամենայնիվ, միայն զրանով ղեկավարվելը ճիշտ չէր լինի և թյուրիմացությունների տեղիք կտար, որովհետև Դատաստանագրքի երկատումով

<sup>28</sup> «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց», էջ 18—19:

մինչև վերջ ու հստակորեն չի լուծվել ընդդատութիւն հարցը և երկու մասում էլ հանդիպում ենք հակառակ ընդդատութիւն գործերի: Այսպիսի պայմաններում կողմնորոշվելու համար այլ կովաններ են պետք, որոնք բարեբախտաբար կան և շատ ավելի վստահելի են: Գատաստանագրքի առանձին հոդվածներ պարունակում են ուղղակի կամ անուղղակի ցուցումներ տվյալ դիպվածի կամ դիպվածների տվյալ խմբի ընդդատութիւն վերաբերյալ, որոնք, անկախ Գատաստանագրքի բաժանումից մասերի, հնարավորութիւն են տալիս ճշտութեամբ որոշելու համարյա բոլոր գործերի ընդդատութիւնը ըստ երկու բնույթի առջանների: Մինչ այդ ցուցումներին անդրադառնալը ծանոթանանք մի շատ կարևոր սկզբունքի հետ, որ սահմանում է Մխիթարը. «Գիտելի է դի ամենայն օրինագրութիւն լուծեալ և զզջացեալ ոչ կարօտի դատաստանի, իսկ անզզջիցն դատաստանի պէտք են... Լուծեալ և զզջացեալ — ի ձեռն վարդապետաց վերստին ուղղութիւն. այլ անզզջից դատաստանաց իրաւունք»<sup>29</sup>: Այսպես, ուրեմն, օրինազանցի զզջման դեպքում ապաշխարութիւն, եթե զզջում տեղի չի ունենում՝ «դատաստանաց իրաւունք», ըստ որում նշանակութիւն չունի, թե ինչ օրենք է խախտված՝ աստվածադիր թե՛ մարդադիր: Բայց, ի՞նչ հասկանալ օրենքի խախտման և զզջման կամ շղջալու տակ: Խախտել ու զզջալ, նշանակում է դալ այն գիտակցութեան, որ ճիշտ չի եղել նման վարվելակերպը, խղճի խաչթ զգալ դրա հետեանքով որևէ մեկի բարոյա-իրավական կամ նյութական շահը ոտնահարելու համար և, որ ամենից կարևորն է տվյալ դեպքում, պատրաստակամութիւն հայտնել կամ փորձել վերականգնել նախկին վիճակը, փոխհատուցել պատճառած վնասը և այլն: Եթե օրինազանցի հոժարակամ պատրաստակամութեամբ այդ փոխհատուցումը վճարվել և ընդունվել է, ապա կողմերի միջև այլևս իրավական վեճ չկա. իսկ այնտեղ, ուր չկա իրավական վեճ, չի կարող լինել և դատաստան — դատարանութիւն, այս բառի իսկական, աշխարհական իմաստով: Գոհացնելով տուժողին, օրինազանցը արգելակում է այն դսպանակները, որոնք պիտի շարժման մեջ դնեին աշխարհական դատական ատյանը, որովհետև գոյութիւն ունեցող դատավարական կարգի համաձայն, որին այստեղ անդրադառնալ չենք կարող<sup>30</sup>, աշխարհական դատարանը, բացառութեամբ որոշ դեպքերի, անտարբեր է օրինախախտման նկատմամբ այնքան ժամանակ, քանի դեռ չեն դիմել նրան: Բայց, միջնադարում օրինախախտումը մեղք է երկու իմաստով՝ իրավական և կրոնական, ըստ այդմ մեղքի բավումն էլ լինում է երկու ձևով՝ իրավական՝ պատիժ (ձեծ, տուգանք, անգամահատում և այլն) և կրոնական՝ ապաշխարանք և այլն: Տուժողին բավարարելով, օրինախախտը վերացնում է իր պատասխանատվութիւնը իրավունքի առաջ, բավում է իր մեղքը իրավունքի հանդեպ, բայց ամբողջութեամբ չէ, որ բավում է իր մեղքը կրոնի հանդեպ. այդ պատճառով «լուծեալ և զզջացեալ — ի ձեռն վարդապետաց վերստին ուղղութիւն»:

Իսկ խախտել օրենքը և շղջալ, նշանակում է իրավացի համարել սեփական վարվելակերպը, կամ ժխտել բուն արարքը, կամ հրաժարվել գոհացում տալուց և այլն, այլ կերպ՝ իրավական վեճի տեղիք տալ: Եկեղեցին այս դեպքում էլ, իհարկե, կարող էր ապաշխարութիւն դնել օրինախախտի վրա և դրանով գոհացնել աստծուն, ապահովել հանցավորի մեղքի բավումը կրոնի հան-

29 «Գատաստանագիրք հայոց», էջ 389—390:

30 Մանրամասն տե՛ս մեր «Գատարանակազմութիւնն ու դատավարութիւնը...»:

դեպ, բայց իրավունքի հանդեպ մեղքը բավելու, տուժողին բավարարելու կարող էր հարկադրել միայն մարմնավոր իշխանությունը: Հենց այս իմաստով է Մխիթարն ասում. «այլ անդղջից — դատաստանաց իրաւունք»:

Այսպիսով, Մխիթարի սահմանած ընդհանուր սկզբունքի համաձայն, իրավական վեճերը, որպես կանոն, ենթակա են աշխարհական դատարաններին:

Այժմ ծանոթանանք Գատաստանագրքի առանձին ցուցումներին: Երկրորդ մասի 1-ին հոդվածում խոսելով դավաճանության, «տերունի գանձի» գողության և սպանության մասին, Մխիթարը գրում է. «Չայդոսիկ թագաւորն դատիցի ... Իշխանաց մի լիցի սպանողսն սպանանել առանց հրամանի թագաւորաց, իսկ գողսն խրատել իշխան լիցին»<sup>31</sup>: Ըստ այդմ դավաճանության, սպանության, գողության վերաբերյալ գործերը ընդդատյա են աշխարհական դատարանին: Հոդված 11, 123. «Այլ խարդախիցն խրատ ըստ հրամանի իշխանացն լիցի. գողիցն ի շափսն եւ ի կշիռսն հատուցանել շորեքկին եւ յանդիմանութեամբ նշաւակել ի դարհուրումն այլոց: Իսկ դահեկանահատիցն եւ դրամակոփիցն գձեռան հատանել հրամանաւ իշխանաց...»<sup>32</sup>: Ըստ այս հոդվածի, առևտրի կանոնների խախտման հետ կապված գործերը, դրամանենդությունը, դրամահատությունը և այլն ընդդատյա են աշխարհական դատարաններին:

Ամփոփելով այս կարգի վկայությունները, կարող ենք արձանագրել, որ Մխիթարի Գատաստանագրքի համաձայն աշխարհական դատարաններին ընդդատյա էին հետևյալ գործերը ըստ իրավունքի ճյուղերի.

### 1. Պետական իրավունք.

Թագավորի, իշխանների, ազատների, ավատատերերի ու շինականների փոխադարձ հարաբերություններ ու սպարտավորություններ, հարկ, տուրք և այլն:

Պետական-հպատակային և տերունական-ենթակայական հարաբերություններ:

Զինապարտություն, պատերազմական ավարի բաժանում և այլն և այլն:

### 2. Քաղաքացիական իրավունք.

Գույքային և պայմանագրային հարաբերություններ, առ ու վաճառք և այլն: Հասցված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործեր:

Աշխատանքի անվտանգության պահպանությունից բխող գործեր:

ժառանգական իրավունք՝ մասամբ:

Քաղաքացիական իրավունքի բնագավառին պատկանող գործերի մի մասը ընդդատյա է հոգևոր ատյաններին:

### 3. Քրեական իրավունք.

Դավաճանություն, լրտեսություն, սպանություն, ավազակություն, գողություն, մարմնական վնասվածքների պատճառում, դրամանենդություն և այլն: Բացառություն էին կազմում մի քանի գործեր, որոնք ընդդատյա էին հոգևոր ատյաններին:

Գատաստանագրքի համաձայն հոգևոր ատյաններին ընդդատյա էին այն գործերը, որոնք վերաբերում էին.

1. Եկեղեցու կազմակերպությանը, պաշտամունքին, ծիսակատարությանը և այլն:

<sup>31</sup> «Գատաստանագիրք հայոց», էջ 311:

<sup>32</sup> Անդ, էջ 434—435:

2. Հոգևորականության աստիճանակարգությանը, նրանց անձնական իրավունքներին ու պարտականություններին, զույրային փոխադարձ հարաբերություններին՝ կապված եկեղեցու սեփականության հետ, ծխերի բաժանում, եկեղեցու դատավորների վարձատրություն և այլն:

3. Ամուսնությունը, ամուսնալուծությունը, ամուսինների անձնական հարաբերություններին, ընտանիքի բարոյական կողմին առհասարակ, երեխաների ու ծնողների հարաբերությանը, ժառանգական իրավունքին՝ մասամբ և այլն:

4. Այն արարքները, որոնցում բացակայում է մեղքը բրեա-իրավական իմաստով և որոնք, հետևապես, հանցագործություն չեն, թեև ունեն դրա արտաքին հատկանիշները. օրինակ՝ սպանություն անմեղսունակության վիճակում, սպանություն անհրաժեշտ պաշտպանության ժամանակ և այլն, ու II 18-րդ հոդվածով նախատեսված գործերը:

Եկեղեցուն ընդդատյա գործերի այս ցանկն արդեն ցույց է տալիս, որ հոգևոր դատարանը չի ունեցել այն դերն ու նշանակությունը, որ վերագրել են նրան: Եկեղեցական դատարանը զբաղվել է գերազանցապես եկեղեցու և հոգևորականության հետ կապված գործերով: Աշխարհական գործերի խիստ նեղ բնագավառն է ընդդատյա եղել նրան, սահմանափակված առավելապես ընտանիքի ու ամուսնության իրավունքով և քաղաքացիական իրավունքի մի մասով:

Հայկական թագավորության, կամ իշխանապետության, կամ իշխանությունների գոյության պայմաններում աշխարհական դատարանները առաջնակարգ դեր են խաղացել ոչ միայն այն փաստի ուժով, որ միաժամանակ դատավորներ էին իրենք՝ մարմնավոր բարձրագույն ու տեղական իշխանության ներկայացուցիչները, այլև ցարդ արժանի ուշադրության շարժանացած այն կարևոր պատճառով, որ նրանց ձեռքին էր հարկադրանքի ուժը, այդ բառի դինական-ոստիկանական իմաստով. հանգամանք առանց որի իրավունքը ոչինչ է, և որով պայմանավորված էր իրեն՝ հոգևոր դատարանի գործոն նշանակությունը:

Հայաստանում հոգևոր դատարանների նշանակությունը հայկական մարմնավոր իշխանության շրջանի պայմաններում անհիմն կերպով ընդհանրացվել ու տարածվել է հայկական իրավունքի պատմության բոլոր շրջանների վրա և, այդպիսով, գերազնահատվել է նրանց դերը աշխարհական դատարանների նկատմամբ նաև ազգային իշխանությունների առկայության ժամանակաշրջաններում:

X. A. ТОРОСЯН

## ПОДСУДНОСТЬ В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

### Резюме

В статье пересматривается распространенное в арменоведении мнение, согласно которому судебная юрисдикция в средневековой Армении принадлежала духовенству и роль светской власти в этой области была второстепенной.

Путем тщательного исследования историографических данных и юридических памятников в статье показано, что в средневековой Армении существовали следующие светские суды: государственные—царский, княжеский и низшие; феодальные—сословный и господский. Этим судам были подсудны следующие дела: о взаимоотношениях и взаимных обязанностях царя, князей, азатов (дворян); дела о податях, налогах и т. д., о воинской повинности, дележе военной добычи и т. д. В компетенции этих судов были частично гражданские дела и почти полностью—все уголовные.

Духовным судам были подсудны дела, относившиеся к организации церкви, к культуре, к вопросам чиноначалия духовенства, распределения приходов и т. д., частично гражданские, а также такие дела, где не было наличия вины в уголовно-правовом смысле и которые не считались преступлением.

KH. A. THOROSSIAN

#### DE LA JURIDICTION DANS L'ARMENIE MEDIEVALE

L'article révisé une opinion répandue dans les Etudes arméniennes, selon laquelle la juridiction formait, au moyen âge, en Arménie, l'apanage quasi-exclusif de l'Eglise, le pouvoir laïque n'ayant eu en ce domaine qu'une compétence très limitée.

L'auteur dresse, à la suite d'un examen détaillé des données historiques et des monuments juridiques, un tableau des tribunaux laïques de l'époque: tribunaux ordinaires ou d'Etat où l'on distingue la justice royale, la prévôté royale, le tribunal inférieur; tribunaux féodaux comprenant le tribunal des pairs et le tribunal seigneurial. Le ressort de ces tribunaux s'étendait aux affaires suivantes: rapports sociaux à tous les échelons touchant le suzerain, les „ichkhans“ (princes), les „azats“ (petite noblesse), les féodaux, les „chinakans“ (serfs), obligations qui s'ensuivent; taxes et impôts; obligations militaires; partage du butin de guerre, etc. Leurs attributions, partielles en matière de droit civil, étaient très larges au point de vue pénal.

Le pouvoir judiciaire de l'Eglise s'exerçait au moyen du tribunal synodal, d'une part, des tribunaux patriarcaux, épiscopaux et paroissiaux, d'autre part, qui ne connaissaient que des affaires ecclésiastiques: organisation intérieure, culte, questions d'hierarchie, distribution des diocèses, etc. Le droit civil ne pouvait les concerner que rarement; le droit pénal ne leur réservait que les délits de moindre importance.